

«Կորպորատիվ ֆինանսներ» մագիստրոսական ծրագիր

Ընդհանուր տեղեկություն

«Կորպորատիվ ֆինանսներ» մագիստրոսական ծրագիրը մշակվել է Եվրոպական Միության մի շարք համալսարանների հետ եռամյա համագործակցության արդյունքում:

[ԸԻՏԱՅՆ](#) («Ֆինանսների մագիստրոսական ծրագրերի բարեփոխում Հայաստանում և Մոլդովայում»)-ը Էրազմուս+ ծրագրի Բարձրագույն կրթության ոլորտում կարողությունների զարգացման եռամյա նախագիծ է, որը համաֆինանսավորվում է Եվրոպական Միության կողմից: Այն համակարգում է Վիեննայի կիրառական գիտությունների BFI Վիեննա համալսարանը: «Կորպորատիվ ֆինանսներ» մագիստրոսական ծրագրի բարեփոխման նպատակով այդ ծրագրի շրջանակներում դասավանդող դասախոսները Ավստրիայում, Սլովակիայում, Նիդեռլանդներում և Ֆրանսիայում գործող, նախագծի գործընկեր-համալսարաններում մասնակցել են երկշաբաթյա վերապատրաստումների, վերամշակել են իրենց առարկաների ուսումնական պլանները, դրանց բովանդակությունը, առաջադրանքները, վերջնարդյունքները և գրականության ցանկը՝ համագործակցելով այդ համալսարանների համապատասխան ոլորտի լավագույն մասնագետների հետ: Համատեղ ջանքերի արդյունքում կազմվել են արդիականացված և նորագույն միջազգային զարգացումներին համահունչ ուսումնական պլաններ, որոնք կնպաստեն ուսանողների մասնագիտական կարողությունների զարգացմանն ու աշխատաշուկայի պահանջների բավարարմանը: Ծրագրում շեշտադրված են գիտելիք, հմտություն, կարողություն զարգացնող ժամանակակից ուղիները, կրթական ծրագրերի մշակման սկզբունքները, դասընթացին ուսանողի առավելագույն ներգրավումն ապահովող առցանց հարթակների կիրառությունը, հետադարձ կապի ստեղծման կարևորությունը: Բացի ուսումնական ծրագրերը վերամշակելուց՝ դասախոսները անցել են մեկ այլ երկշաբաթյա վերապատրաստումներ Եվրոպական համալսարաններում (Ֆրանսիայում և Նիդեռլանդներում)՝ դասավանդման և մանկավարժական ժամանակակից մեթոդների վերաբերյալ:

Մագիստրոսական կրթական ծրագիրն իրականացվելու է ոլորտի հայտնի մասնագետների անմիջական ներգրավվածությամբ, ծրագրի ասոցացված գործընկերն է «Հայաստանի ֆոնդային բորսա» ԲԲԸ-ն: Ծրագրի տևողությունը 2 տարի է, դասապրոցեսը նախատեսվում է իրականացնել շաբաթական երեք անգամ՝ մոդուլային սկզբունքով: Վերջին կիսամյակի ընթացքում ուսանողները

հնարավորություն ունեն ընտրել մասնագիտական հավելյալ դասընթաց կամ փորձառություն՝ գործընկեր կազմակերպություններից մեկում:

Ուսման վճարը մեկ տարվա համար 620 000 ՀՀ դրամ է:

Մասնագիտության նկարագիրը

Անկախ տնտեսության վիճակից, ճգնաժամային իրավիճակների առաջացումից կամ տնտեսության թոփաքային աճից, տնտեսության մեջ մշտապես առկա է ֆինանսական խոհրդատվություն մատուցվող, ակտիվների կառավարմամբ, ֆոնդերի կառավարմամբ զբաղվող կամ այլ ֆինանսական գործառնությունների իրականացման մեջ անհրաժեշտ գիտելիք, հմտություն և կարողություն ունեցող մասնագետների պահանջ:

«Կորպորատիվ ֆինանսներ» մագիստրոսական ծրագրով պատրաստվում են տնտեսագետ ֆինանսիստի որակավորում ունեցող մասնագետներ, որոնց կողմից մատուցվող ծառայությունները մշտապես մեծ պահանջ ունեն՝ ֆինանսական և ոչ ֆինանսական կազմակերպություններում, տնտեսության իրական հատվածում, ինչպես նաև պետական ու տեղական ինքնակառավարման ենթակայության տակ գտնվող կազմակերպություններում: Կորպորատիվ կառավարման մշակույթի զարգացումն աշխարհում ու դրա արմատավորումը ՀՀ-ում առաջացնում է այս ոլորտի մասնագետների վերազինման, առկա կարողությունների զարգացման ու արդի միտումներին համապատասխանեցման անհրաժեշտություն: Ուսումնասիրությունների համաձայն՝ ոլորտի գործող ու ոլորտ նոր մուտք գործող մասնագետները կարիք ունեն նոր կարողությունների ձևավորման, որոնք թույլ կտան տիրապետել ֆինանսական որոշումների կայացման ժամանակակից գործիքակազմին ու տեխնոլոգիական լուծումներին: Վերջիններիս ուղղությամբ կրթական ծրագրում նախատեսված են հատուկ բաղադրիչներ, ինչպես մասնագիտական առարկաների կազմով, այնպես էլ՝ առաձին առարկաներով:

Ծրագրի մշակման հիմքում դրված են ուսանողների, շրջանավարտների գործատուների ու դասախոսների շրջանում իրականացված հարցումների արդյունքները, որոնք վեր են հանել ոլորտի հիմնախնդիրները, և, համադրելով դրանք ոլորտի միջազգային միտումների հետ, ընդգծել այն հմտություններն ու կարողությունները, որոնք պետք է հաղորդվեն ծրագրով՝ ժամանակակից աշխարհում պահանջված մասնագետներ պատրաստելու համար:

Այսպիսով, «Կորպորատիվ ֆինանսներ» մագիստրոսական ծրագրի ավարտին ուսանողները կունենան հետևյալ գիտելիքները, հմտություններն ու կարողությունները.

- ֆինանսների տեսություններն ընկալելու, վերլուծելու և կիրառելու ունակություն,
- ֆինանսական խնդիրները հետազոտության ընթացքում բացահայտելու և տարբեր ֆինանսական իրավիճակներ վերլուծելու ունակություն,
- հարկային վարչարարության իմացություն, հարկերը հաշվարկելու և վերլուծելու ունակություն,

- ֆինանսական ինստիտուտների (կորպորացիաների) կառավարման սկզբունքների, մեթոդների և գործիքների իմացություն,
- կորպորացիաների բյուջեն, հոսքերը, ծախսերը և եկամուտները վերլուծելու ունակություն,
- կորպորացիաների ֆինանսական կայունության և իրացվելիության գնահատման և վերլուծության ունակություն,
- ռիսկերի կառավարման և մաթեմատիկական ֆինանսների իմացություն,
- գրավոր և բանավոր հաղորդակցություն,
- թիմային աշխատանք,
- հետազոտական մեթոդաբանության, գործիքակազմի և եզրահանգումներ անելու ունակություն,
- խնդիրներ ձևակերպելու և դրանք լուծելու ուղիների մշակման ունակություն,
- գիտելիքը գործնականում կիրառելու ունակություն,
- արտասահմանյան գիտական, մասնագիտական գրականությունից օգտվելու ունակություն:

Ծրագրով քարտեզագրված նպատակներին հասնելու համար կրթական ծրագրի ըստ վերջնաարդյունքի (իմացության) բաղադրիչի տիպի մշակված են վերջնաարդյունքներին համապատասխան դասավանդման, ուսումնառության և գնահատման մեթոդները, որոնց գծով, ինչպես արդեն նշել ենք, դասավանդող մասնագետներն անցել են համապատասխան վերապատրաստումներ: Այդ վերապատրաստումների ընթացքում մշակվել են նաև մի քանի իրավիճակային խնդիրներ (case studies): Կրթական ծրագրի իրականացման համար գնվել է անգլալեզու և ռուսալեզու գրականություն (շուրջ 80 գիրք), որոնք կիրառվելու են դասավանդման գործընթացում:

Աշխատանքի հնարավորություններ

«Կորպորատիվ ֆինանսներ» մագիստրոսական ծրագիրը միտված է պատրաստել մասնագետներ, որոնք կարող են իրենց հետագա աշխատանքային առաջընթացը գտնել՝

- մասնավոր գույքի ֆինանսական կառավարման ոլորտում (private equity),
- ներդրումային բանկային գործառնությունների իրականացման ոլորտում (investment banking),
- ընկերությունների միաձուլումների ու վերամիավորումների ոլորտում (M&A),

- կորպորացիաներում ավանդական և նորամուծական գործընթացների կառավարման ոլորտներում և այլն:

Ծրագրով ձեռք բերված գիտելիքները, հմտություններն ու կարողությունները շրջանավարտներին մրցունակ կդարձնեն ֆինանսական և ոչ ֆինանսական հատվածի ընկերություններում աշխատանքի տեղավորման ընթացքում՝ ընկերությունների ֆինանսներին առնչվող որոշմաների ընդունման շղթայի ցանկացած հատվածում:

Շրջանավարտները կստանան հաջող կարիերա կառուցելու հնարավորություններ, որպես

- ֆինանսական խորհրդատուներ (financial consultant),
- ֆինանսական վերլուծաբաններ (financial analyst),
- ֆինանսական մոդելավորման մասնագետներ (financial modeling specialists),
- ֆինանսական կառավարիչներ (financial manager),
- ներդրումային մասնագետներ (Investment associate) և այլն: